



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան
20 օգոստոսի 2020թ.

ԲԴԽ-55-Ո-Կ-14

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՎԱՇԵ ԽԱԼԱԹՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆԻՍՏ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Բարձրագույն դատական խորհուրդը, ծանոթանալով Արդարադատության նախարարի՝ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Վահե Խալաթյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2020 թվականի օգոստոսի 10-ի թիվ 83-Ա որոշմանը և կից ներկայացված փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի կողմից Արդարադատության նախարարին 08.05.2020 թվականին ներկայացված հաղորդումը:

Ուսումնասիրելով վերոնշյալ հաղորդումը՝ Արդարադատության նախարարը 08.06.2020 թվականի թիվ 62-Ա որոշմամբ Արմավիրի մարզի առաջին ատյանի

ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վահե Խալաթյանի նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ:

Արդարադատության նախարարի 10.08.2020թ. թիվ 83-Ա որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդին՝ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վահե Խալաթյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունն ստանալու պահից եռամսյա ժամկետում:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի նախագահը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի նիստերը, ստորագրում է Բարձրագույն դատական խորհրդի որոշումները, ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդն այլ մարմինների հետ հարաբերություններում, ինչպես նաև իրականացնում է Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ լիազորություններ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասով և 150-րդ հոդվածի 1-ին մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց .

Արդարադատության նախարարի կողմից ներկայացված՝ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վահե Խալաթյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդության քննության կապակցությամբ Բարձրագույն դատական խորհրդի նիստը նշանակել 2020 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 14³⁰-ին՝ Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում /ք. Երևան, Կորյունի 17/:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ